ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի, ինչպես նաև Պալատի նախագահի 17.12.2013թ. թիվ 70-Լ որոշմամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2014 թվականի հուլիսի 11-ին*** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել մարզի փաստաբանների ժողով (այսուհետ՝ Ժողով)՝ ***«Մարզային համակարգողի ընտրություն»*** օրակարգով:
2. Սահմանել, որ ***քվեարկությունը սկսվում է 2014 թվականի հուլիսի 11-ին ժամը*** *13:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 16:00-ին.*
3. Սահմանել, որ մարզային համակարգողի ***թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է*** *2014* ***թվականի հունիսի*** *30-****ից (ներառյալ) և ավարտվում է*** *2014* ***թվականի հուլիսի*** *04-****ին, ժամը 18****:00-****ին:***
4. Սահմանել, որ ***քարոզչությունը սկսվում է*** *2014****թ. հուլիսի*** *05-****ից (ներառյալ) և ավարտվում է*** *2014* ***թվականի հուլիսի*** *10-****ին, ժամը*** *18:00-****ին****:*
5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝
   - եռօրյա ժամկետում իրազեկել Շիրակի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստի և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը զետեղելու միջոցով:
   - սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին:
   - հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

19 **հունիսի** 2014**թ**.
թիվ 197-**Լ**

6. Հանձնարարել Պալատի ֆինանսական տնօրենին՝ մարզային ընտրությունների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև հաշվիչ հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարել Պալատի բյուջեի միջոցների հաշվին՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայացրած հայտի հիման վրա:

7. Հաստատել Շիրակի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

19 **հունիսի** 2014**թ**.
թիվ 197-**Լ**
ք. **Երևան**

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
19.06.2014թ. թիվ 197-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Շիրակի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2 19.06.2014թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2014 թվականի հուլիսի 11-ին Գյումրի քաղաքում (հասցեն՝ քաղաք Գյումրի Խրիմյան Հայրիկի 46 ա, 2-րդ հարկ, հանրային պաշտպանի գրասենյակ) մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Շիրակի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2014 թվականի հուլիսի** 11-**ին**, **ժամը 1**3:00-**ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 1**6:00-**ին**:
2. Մարզային համակարգողի **թեկնածուների առաջադրումը** (**ինքնաառաջադրումը**) **սկսվում է** 2014 **թվականի հունիսի** 30-**ից** (**ներառյալ**) **և ավարտվում է** 2014 **թվականի հուլիսի** 04-**ին ժամը** 18:00-**ին**:
3. Քարոզչությունը սկսվում է 2014 **թվականի հուլիսի** 05-**ից** (**ներառյալ**) **և ավարտվում է** 2014 **թվականի հուլիսի** 10-**ին ժամը** 18:00-**ին**:
4. Մարզի յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ**:
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով**:
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Առաջադրման կամ ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը («Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.32 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝